

Երևան, 1 փետրվարի 2010 թ.

Հարգելի տնօրեն,

«Այբ» կրթական հիմնադրամը ուրախ է հայտարարելու, որ «**Կենգուրու 2010» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումը սկսված է:**

Կրկին շնորհակալություն ենք հայտնում այն դպրոցներին, որոնք մասնակցել են «Կենգուրու 2009»-ին, և լիահույս ենք, որ այս տարի ևս ձեր դպրոցների սաները նույն խանդավառությամբ կփորձեն ուժերը մաթեմատիկայում: Բոլոր այն դպրոցներին, որոնք չեն մասնակցել անցյալ տարվա մրցույթին, սիրով հրավիրում ենք միանալու «Կենգուրու» կոչվող մանկական մաթեմատիկական շարժմանը:

Այս տարի «Կենգուրու» մրցույթը Հայաստանում կանցկացվի **մարտի 18-ին:**

Մրցույթին մասնակցելու հայտի ներկայացման վերջնաժամկետն է **փետրվարի 24-ը:**

Մանրամասն տեղեկությունները «Կենգուրու» խաղ-մրցույթին մասնակցելու ընթացակարգի վերաբերյալ բերված են նամակին կից փաթեթում, որի պարունակությունը նկարագրված է նամակի դարձերեսին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Յուրաքանչյուր մասնակից դպրոց, ինչպես և նախորդ տարի, ունենալու է իր ծածկագիրը: **Ձեր դպրոցի ծածկագիրը նշված է ծրարի վրա:**

Ուրախ ենք նաև տեղեկացնելու, որ այս տարի «Կենգուրուի» խնդիրները (միան ինդիրները) լինելու են երկլեզու բոլոր երեխաների համար՝ հայերեն և ռուսերեն: Մրցույթի օրը երեխան հնարավորություն կունենա ընտրել խնդիրները կարդալու և հասկանալու իրեն հարմար լեզուն: Այս հնարավորությունը ընձեռնվել է Հայաստանում «Россотрудничество» ներկայացուցչության շնորհիվ:

Մրցույթի կայքէջն է՝ [www.kangaroo.am](http://www.kangaroo.am): Բոլոր հարցերով դիմեք Ձեր մարզային համակարգողներին:

Ակնկալում ենք Ձեր դպրոցի մասնակցությունը «Մաթեմատիկական բոլորի համար» խորագրի ներքո անցկացվող այս հետաքրքիր մրցույթին:

Հարգանքներով՝



Դավիթ Սահակյան  
Գործադիր տնօրեն

- 1. «Կենզուրու 2009»-ի հակիրճ նկարագրող ամփոփում**  
Սիրով ներկայացնում ենք անցյալ տարվա մրցույթի հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները:
- 2. «Կենզուրու 2010»-ի անցկացման մանրամասն կարգը**  
Խնդրում ենք Ձեզ և ձեր դպրոցում մրցույթի կազմակերպիչներին ուշադրությամբ ծանոթանալ այս կարգին:
- 3. Դպրոցի հայտի ձևը**  
Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև փետրվարի 24-ը ներկայացնել այն «Այբ» կամ մարզային համակարգողին, ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցանկի և վճարման անդորրագրերի հետ միասին: Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:
- 4. Ուղեցույց դպրոցների համար**  
Այստեղ, հեշտության համար, քայլ առ քայլ ներկայացված են դպրոցի պատասխանատուի անելիքները՝ ըստ ժամանակացույցի:
- 5. Թերթոն**  
«Կենզուրու 2010»-ի տեղեկատվական փոքրիկ թերթոն, որտեղ ներկայացված են նաև մրցույթի նպատակներն ու կանոնները: Թերթոնում կգտնեք նաև ձեր մարզային համակարգողի հեռախոսահամարը:
- 6. A3 չափի պաստառ**  
Խնդրում ենք փակցնել պաստառը դպրոցում՝ որպես «Կենզուրու 2010»-ի հայտարարություն և մրցույթին զրանցվելու ուղեցույց երեխաների համար:
- 7. Մասնակցության վճարը կատարելու համար անհրաժեշտ բանկային վավերապայմանները**  
«ՎՏԲ-Հայաստան» բանկում մասնակցության վճարը կատարելու կարգի մասին այս թերթիկները նախատեսված են երեխաներին տրամադրելու համար: Խնդրում ենք բազմացնել դրանք անհրաժեշտ բանկով, կտրատել և բաժանել երեխաներին:
- 8. «Կենզուրուի» մասին տեսաֆիլմ**  
Մրցույթի մասին այս հետաքրքիր տեսաֆիլմը նախատեսված է Ձեր, ուսուցչական կազմի, երեխաների և ծնողների դիտման համար: Այն DVD ձևաչափով է: Ցանկալի է դպրոցում կազմակերպել ֆիլմի դիտումը երեխաների համար:

## Ի՞նչ է «Կենզուրուն»

«Կենզուրուն» մեծ մասսայականություն վայելող մաթեմատիկական խաղ-մրցույթ է և կազմված է տրամաբանական ու հետաքրքրաշարժ խնդիրներից: Ամեն տարի մրցույթին մասնակցում են միլիոնավոր երեխաներ աշխարհի մոտ 50 երկրից: Մրցույթն անցկացվում է անմիջականորեն դպրոցներում՝ ներգրավելով 3-11-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաներն ստանում են նաև հուշանվերներ, լավագույնները՝ պատվոգրեր ու մրցանակներ: Իսկ հաղթողներին սպասում են արժեքավոր նվերներ, ընդհուպ մինչև եվրոպական երկրներում կազմակերպվող միջազգային ամառային ճամբարի ուղեգիր: Մրցանակներ են սահմանված նաև յուրաքանչյուր մարզի ամենակոտիվ դպրոցի համար:

«Կենզուրու» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնել մաթեմատիկայի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Կենզուրու» մրցույթն անցկացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հովանու ներքո: Երևանում մրցույթին աջակցում է Երևանի քաղաքապետարանը: Գլխավոր գործընկերն է «ՎՏԲ-Հայաստան» բանկը:

Հայաստանում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

## Մարզային համակարգողներ

- 1. Արագածոտն**  
093 59-08-35, Գայանե Դանիելյան
- 2. Արարատ**  
077 12-51-06, Արսեն Ավայան
- 3. Արմավիր**  
077 12-51-06, Արսեն Ավայան
- 4. Գեղարքունիք**  
098 81-32-21, Արսեն Ավայան
- 5. Երևան, 54-37-07**  
093 01-08-63, Շողիկ Մկրտչյան
- 6. Լոռի**  
098 81-32-20, Արսեն Ավայան
- 7. Կոտայք**  
098 81-32-19, Արսեն Ավայան
- 8. Շիրակ**  
093 46-49-03, Վարդան Մանուկյան
- 9. Սյունիք**  
099 22-02-10, Սևադա Խոջաբաղյան
- 10. Վայոց Ձոր**  
099 22-02-10, Սևադա Խոջաբաղյան
- 11. Տավուշ**  
093 43-37-04, Արսեն Ավայան